

Խմբակցության ղեկավար՝ Թ. Պողոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ԲԱՐԳԱՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնադրությունը կարգավորում է Երևան քաղաքի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության (այսուհետ՝ Խմբակցություն) գործունեությունը, նրա մարմինների իրավասությունները, աշխատանքային ընթացակարգերը:
- 1.2. Խմբակցությունը ստեղծվել է Երևանի քաղաքապետարանի նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցության առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներից:

2. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 2.1. Խմբակցությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ Օրենք), Երևան քաղաքի ավագանու կանոնակարգին, այլ իրավական ակտերին ու սույն կանոնադրությանը համապատասխան:
- 2.2. Խմբակցության գործունեությունը հիմնվում է բազմակարծության, հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքների վրա:
- 2.3. Խմբակցությունը կարող է ունենալ գործավար և փորձագետներ, որոնք աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ Խմբակցության ղեկավարի ներկայացմամբ և կատարում նրա հանձնարարությունները, ինչպես նաև աջակցում Խմբակցության անդամների աշխատանքներին:

3. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- 3.1. Խմբակցության մարմիններն են՝ ղեկավարը, քարտուղարը և անդամները:
- 3.2. Խմբակցության ղեկավարը՝

ա) հրավիրում և վարում է Խմբակցության նիստերը.

բ) կազմում և Խմբակցության անդամների հաստատմանն է ներկայացնում Խմբակցության նիստի օրակարգը.

գ) ստորագրում է Խմբակցության որոշումները և հայտարարությունները, ինչպես նաև Խմբակցության անունից կազմվող բոլոր գրություններն ու փաստաթղթերը.

դ) վարում է Խմբակցության աշխատանքային խորհրդակցությունները, կազմակերպում և ղեկավարում է Խմբակցության ընթացիկ աշխատանքային գործունեությունը.

ե) ներկայացնում է Խմբակցությունն այլ անձանց և մարմինների հետ ունեցած հարաբերություններում.

զ) Խմբակցության անունից վարում է բանակցություններ, արտահայտում Խմբակցության դիրքորոշումներն ու տեսակետները, այդ թվում՝ ավագանու նիստերում:

3.3. Խմբակցության քարտուղարը՝

Խմբակցության ղեկավարի բացակայության դեպքում իրականացնում է նրա գործառույթները:

3.4. Խմբակցության անդամը՝

3.4.1. Խմբակցության անդամն իրավունք ունի.

ա) ընդգրկվելու ավագանու ժամանակավոր և քննող հանձնաժողովների կազմում,

բ) ելույթ ունենալու Խմբակցության, հանձնաժողովի, ավագանու նիստում և լսումներում, հարցեր տալու, հանդես գալու առաջարկություններով ու նախաձեռնություններով,

գ) կատարելու Երևանի բնակիչների ընդունելություն, կազմակերպելու հանրային հանդիպումներ,

դ) Խմբակցության որոշմամբ արտահայտելու դիրքորոշումներ կամ վարելու բանակցություններ Խմբակցության անունից: Մյուս բոլոր դեպքերում Խմբակցության անդամը կարող է արտահայտել իր անձնական տեսակետը՝ հատուկ նշելով այդ մասին,

ե) դուրս գալու Խմբակցությունից,

զ) իրականացնելու Օրենքով և Երևանի ավագանու կանոնակարգով սահմանված այլ լիազորություններ:

3.4.2. Խմբակցության անդամը պարտավոր է.

ա) ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցելու որևէ մշտական հանձնաժողովի,

բ) մասնակցելու Երևան քաղաքի ավագանու, «Բարգավաճ Հայաստան» Խմբակցության և իր անդամակցած մշտական հանձնաժողովի նիստերին,

գ) ստանձնելու Օրենքով և ավագանու կանոնակարգով սահմանված այլ պարտականություններ:

4. ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԵՐԸ

4.1. Խմբակցության հերթական նիստերը հրավիրվում են ավագանու նստաշրջանների ընթացքում՝ ամիսը առնվազն մեկ անգամ՝ Խմբակցության ղեկավարի կողմից:

4.2. Խմբակցության ղեկավարի կամ անդամների մեկ երրորդի նախաձեռնությամբ կարող են հրավիրվել նաև արտահերթ նիստեր:

4.3. Խմբակցության նիստեր կարող են հրավիրվել նաև նստաշրջաններից դուրս՝ սույն կանոնադրությամբ սահմանված ընթացակարգով:

4.4. Խմբակցության ղեկավարը նիստից առնվազն 2 օր առաջ Խմբակցության անդամներին տեղեկացնում է նիստի անցակցման օրվա, ժամի և տեղի մասին՝ նրանց տրամադրելով օրակարգը և դրան առնչվող փաստաթղթերը, եթե այդպիսիք կան:

4.5. Խմբակցության նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Խմբակցության անդամների կեսից ավելին (քվորումն ապահովված է):

4.6. Նիստը վարում է Խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ Խմբակցության քարտուղարը: Խմբակցության ղեկավարի և քարտուղարի միաժամանակյա բացակայության դեպքում նիստը վարում է Խմբակցության տարիքով ավագ անդամը:

4.7. Խմբակցության նիստում կարող է քննարկվել Երևանի ավագանու իրավասություններին վերաբերող ցանկացած հարց:

4.8. Խմբակցության նիստի օրակարգում ընդգրկված հարցերը քննարկվում են հետևյալ ընթացակարգով.

ա) օրակարգի հաստատում,

բ) քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի ելույթը,

գ) մտքերի փոխանակություն,

դ) քվեարկություն:

- 4.9. Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է այդ հարցի քննարկման ավարտից անմիջապես հետո:
- 4.10. Խմբակցության նիստում որոշումներն ընդունվում են, եթե դրանց կողմ են քվեարկել նիստին ներկա Խմբակցության անդամների կեսից ավելին:
Քվեարկության արդյունքում ձայները հավասար բաշխվելու դեպքում վճռորոշ է համարվում նիստը վարողի դիրքորոշումը:
- 4.11. Նիստի արձանագրությունը, որը ներառում է Խմբակցության նիստում քննարկված բոլոր հարցերի քվեարկությունների անվանական արդյունքները, ստորագրում է նիստը վարողը:
- 4.12. Խմբակցության ղեկավարի կամ անդամների առնվազն մեկ երրորդի համաձայնությամբ Խմբակցության նիստերին կարող են հրավիրվել նաև այլ անձինք:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՂԴՈՒՅԹՆԵՐ

- 5.1. Սույն կանոնադրությունում լրացումներ կամ փոփոխություններ կարող են կատարվել Խմբակցության անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
- 5.2. Սույն կանոնադրությունն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունիսի 8-ից: